

ՎԵԼԵՆՅԵՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վելենյեն մոդեռն ճարտարապետությամբ և զարգացող միջմշակութային ազատ շփումներով երիտասարդ, ժամանակակից եվրոպական քաղաք է: Առաջին անգամ այն հիշատակվել է 13-րդ դարում՝ որպես առևտրային ավան, մինչդեռ իր զարգացումը որպես քաղաք սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ 1959 թվականի սեպտեմբերի 20-ին հանդիսավորապես բացվեց քաղաքի նորակառույց կենտրոնը: Այսօր Վելենյեն նաև քաղաքային ինքնավար շրջան է, որը ներառում է 25 բնակավայր 33 000 բնակիչներով, որոնցից շուրջ 25 000-ն ապրում է քաղաքում: Դա Սլովենիայի կարևորագույն տնտեսական կենտրոններից է, ինչպես նաև՝ Սավինյա-Շալեկ շրջանի բնակչության զբաղվածության, վարչական և կրթական կենտրոնը: Վելենյեի տնտեսական զարգացման հենասյուներն են քարածխի արդյունահանումը, էներգետիկ ոլորտը, մետաղամշակությունը և մասնագիտացված ծառայությունները, վերջին շրջանում՝ նաև տուրիզմը: Վելենյեի լավ սպասարկվող ենթակառուցվածքներն ու հյուրընկալությունն արժանացել են ազգային և միջազգային մակարդակի բազմաթիվ մրցանակների: Քաղաքի (ծովի մակարդակից բարձրությունը՝ 390 մ – Տիտոյի հրապարակ) բնությունը և շրջակայքը տեսանելի և հանրամատչելի է՝ քաղաքային զբոսայգիներում, անտառներում, լճերի մոտակայքում, արշավային, հեծանվային և լեռնագնացային արահետներում: Ժամանակակից մարզական կառույցները, մշակութային հաստատությունները, թանգարանները, կրթական հաստատությունները և բազմաթիվ հասարակական կազմակերպությունները, ակումբները և ստեղծագործ անհատները մեծապես նպաստում են քաղաքի ռիթմին: Վելենյեն հայտնի է իր մեծաթիվ մարզական, ժամանցային, զբոսաշրջային և մշակութային միջոցառումներով: Դա երաժշտության, պարի, պոեզիայի և ծաղկող գաղափարների քաղաք է: Վելենյեի պատմությունը գրելու են մեծ թվով ականավոր անուններ՝ ճանաչված

տնտեսագետներ, գիտնականներ, նկարիչներ, մարզիկներ,
քաղաքական գործիչներ և այլն, որոնք ծագումով Վելենյեից են:
Վելենյեն մշակութային հուշարձանների քաղաք է և բնորոշվում է
բազմաթիվ բնական տեսարժան վայրերով ու հատկապես
միջոցառումներով և մարդկանցով, որոնք սիրով հրավիրում ու մեծ
անհամբերությամբ սպասում են ձեզ: – *Հին և նոր բարեկամներ, բարի
գալուստ Վելենյե:*

© UVKF/Velenika/Leemeta